Informatics Solution

Բացահայտեք հարթ քարտերի տպագրական տեխնոլոգիայի դերը ֆինանսական հաստատություններում

Անկախ նրանից, վճարային քարտը կթողարկվի կենտրոնական թե ակնթարթային լուծմամբ, հարթ քարտերն աչքի են ընկնում իրենց գրավիչ ժամանակակից տեսքով:

Ներածություն

Ինչու՞ ընտրել հարթ վճարային քարտեր

Անսահմանափակ դիզայնի հնարավորությունները նպաստում են գործառնական արդյունավետությանը:

Ֆինանսական հաստատություններում հարթ քարտերի տպագրության տեխնոլոգիայի կիրառումը զգալիորեն լայն տարածում է գտել ողջ աշխարհում: Անկախ նրանից, թե վճարային քարտը թողարկվել է կենտրոնական թե ակնթարթային թողարկման լուծումով, հարթ քարտերի տպագրության լուծումը կիրառելուց հետո ֆինանսական հաստատությունները դրական փոփոխություն են արձանագրել:

Չնայած նրան, որ ուռուցիկ տպագրությամբ քարտերը որոշակի պահանջարկ են ապահովում քարտային շուկայում, հարթ քարտերի տպագրության տեխնոլոգիայի կիրառումն այսօր լայն տարածում է գտել դիզայնի լայն ընտրության և գործառնական արդյունավետության շնորհիվ:

Հաճախորդներն ակնկալում են ունենալ առավել գրավիչ տեսքով վճարային քարտեր, իսկ քարտ թողարկողները մյուս կողմից կարող են օգտագործել առիթը՝ առաջարկելով ծախսարդյունավետ լուծումներ, որոնք էլ ավելի կմեծացնեն գործառույթների ծավալը: Հարթ վճարային քարտերը երաշխավորում են դրական արդյունքներ:

Բովանդակություն

Վճարային հարթ քարտերի դինամիկ դիզայն 4

Հարթ վճարային քարտերի համաշխարհային շուկան 5

Հարթ վճարային քարտ թողարկողներ 6

Նպաստող գործոններ 7

Արդյունք 8

Վճարային քարտերի կենտրոնական թողարկում 9

Վճարային քարտերի ակնթարթային թողարկում 12

Մրցակցային առավելություն 16

Ապագա միտումներ 17

Ձեր պահանջներին համապատասխան լուծումներ 18

Գործընկերային նկատառումներ 19

Նորարարության փորձագետներ 20

Վճարային հարթ քարտերի դինամիկ դիզայն

Ոճը, ֆունկցիոնալությունն ու նորարարությունը ժամանակակից ու գրավիչ տեսք են հաղորդում վճարային քարտերին:

- **Բրենդավորում:** Ֆինանսական հաստատությունները, օգտագործելով ծայրից ծայր տպագրություն, հնարավորություն ունեն քարտի վրա ցուցադրելու լոգոներ, գույներ, դիզայնի եզակի տարրեր: Այս ամենը ապահովում է շարունակական տեսողական ցուցադրում:
- **Էսթետիկա:** Քարտերն օժտված են ժամանակակից դիզայնի ոճային էֆեկտներով, որոնք համահունչ են հաճախորդների տեսողական նախասիրությունների հետ: Հաշվեհամարի արագ և հեշտ կարդալու հնարավորությունը բարձրացնում է քարտի հարմարավետությունը:
- **Անհատականացում:** Ուղղահայաց և հորիզոնական դիզայնի հնարավորություն, քարտի դիմերեսի և դարձերեսի անհատականացման հնարավորություն:
- **Մնայունություն:** Մնայուն նյութեր, փայլուն կամ անփայլ լաքապատում, ուլտրամանուշակագույն ճառագայթմամբ ամրացվող ծածկույթ, որը բարձրացնում է քարտի երկարակեցությունը, ինչպես նաև նրա դիմացկունությունը մաշվածության և գունաթափման հանդեպ:

Հարթ քարտերի համաշխարհային շուկան

Հարթ քարտերի օգտագործման միտումը շարունակում է աճել՝ ձեռք բերելով "դրամապանակում հատուկ կարգավիճակ" (top-of-wallet status):

Հարթ քարտերի առանձնահատկությունները

- Ծայրից ծայր գունավոր լիարժեք տպագրություն
- Բարձրորակ պատկեր մինչև 1,200 DPI
- UV-curable թանաք
- Ժամանակակից գրավիչ տեսք
- Մաքուր լաքապատված տպագրություն, որը երաշխավորում է մնայնություն և քարտի վրա շոշափելիության զգացողություն
- Ուղղահայաց և հորիզոնական տպագրություն
- Դիզայնի անսահմանափակ հնարավորություն, անհատականացում քարտի դիմերեսում և դարձերեսում

Հարթ քարտերի թողարկման կանխատեսում համաշխարհային մակարդակով



Հարթ վճարային քարտ թողարկողները

Հարթ վճարային քարտերը լայնորեն կիրառվում են ֆինանսական հաստատությունների կողմից

Վերջերս անցկացրած հետազոտության արդյունքում պարզ դարձավ, որ 10–ից ավելի երկրների ֆինանսական հաստատությունների 77%–ն այսօր հարթ վճարային քարտեր է թողարկում: Հյուսիսային Ամերիկան և Եվրոպան առաջնորդում են այս ցանկը, քանի որ նրանք սովորաբար միշտ առաջինն են սկսում կիրառել նորագույն տեխնոլոգիաները: Սա պայմանավորված է նաև նրանով, որ այստեղ են գտնվում համաշխարհային խոշոր բանկերի գլխամասերը: Թեև ուռուցիկ տպագրությամբ քարտերը պահպանում են որոշակի աշխարհագրական ներկայություն, օրինակ Աֆրիկայում և Միջին Արևելքում, այնուամենայնիվ հարթ վճարային քարտերի տպագրության տեխնոլոգիան լայն տարածում է ստանում հաշվի առնելով գրանցված զգալի առավելություններն ու արդյունավետությունը:

77%–ն

իրենց հաճախորդներին են առաջարկում դեբետային և/կամ վարկային հարթ վճարային քարտեր:

Նպաստող գործոններ

Հարթ վճարային քարտերի բրենդավորումն ու արդիականացումն օգնում են ֆինանսական հաստատություններին ներգրավել նոր հաճախորդներ:

Հարցման մասնակիցների 73%–ն առանձնացրել է 2 կարևոր գործոն՝ բրենդավորման ավելի շատ հնարավորություններ և ավանդական դիզայնի արդիականացում: Իսկ 60%–ը նշել է, որ կրճատված ծախսերը և բարձրացված արդյունավետությունը դիտարկել են որպես երկրորդ ամենաազդեցիկ դրդապատճառ: Մյուս հիմնական պատճառն է հանդիսանում շուկայում մրցակցային առավելության պահպանումը:

73%–ը

անցում են կատարել հարթ վճարային քարտերի՝ պայմանավորված բրենդավորմամբ և վճարային քարտի գրավիչ և ժամանակակից տեսք ունենալու ցանկությամբ:

60%–ն

ընտրել է կրճատված ծախսերի կամ արդյունավետության բարձրացման կամ էլ երկու գործոնի պատճառով:

77% –ը

գործարքների ավելի մեծ ծավալ են գրանցել

Արդյունք

Հարթ քարտերի օգտագործումը խթանում է գործարքների ծավալը:

Անցումը դեպի հարթ վճարային քարտեր խթանում է բիզնեսի աճը: Հարցվածների 77%-ի մոտ, որոնք սկսել են օգտագործել հարթ քարտեր, գրանցվել է ֆինանսական գործարքների աճ:

Այս վիճակագրությունը լուրջ փաստարկ կարող է լինել ֆինանսական հաստատությունների համար, որպիսի քննարկեն դեպի հարթ քարտերի թողարկման անցումը: Նույնքան ազդեցիկ գործոն է հանդիսանում ծախսարդյունավետությունը: 64%-ն ընդգծել է լրացուցիչ ծախսերի խնայողությունը, իսկ 40%-ը՝ երրորդ կողմի թողարկման արդյունքում առաջացած արդյունավետությունը: Հարցման մասնակիցների 92%–ը նշել է անհատականացման հնարավորությունների ընդլայնման մասին:

Վճարային քարտերի կենտրոնական թողարկում

Քարտերի թողարկման հարմարեցված լուծումներ, որոնք նախատեսված են հաճախորդի պահանջները ճշգրիտ համապատասխանեցնելու համար:

Հաճախորդների կողմից արդեն ընդունված հարթ քարտերն իրենց նրբագեղ և շոշափելի բավչությամբ գերազանցում են քարտապանների սպասելիքները:

Ձեր հաճախորդներին առաջարկեք դիզայնի և տպագրության լայն հնարավորություններով վճարային հարթ քարտեր:

Բարելավեք արդյունքները

Կիրառելով քարտերի թողարկման նորագույն լուծումները՝ պահպանեք ձեր դիրքը շուկայում: Անհատականացված հարթ դեբետային և վարկային քարտերի միջոցով կարելի է գրավել և պահպանել նոր հաճախորդների:

Վճարային քարտերի կենտրոնացված թողարկում

MX Series համակարգ

Հարթ քարտերի տպագրության համար հիանալի լուծում է առաջարկում Datacard® MX Series համակարգը, որը համատեղում է նորագույն հարթ քարտերի անհատականացման տեխնոլոգիաները և քարտերի թողարկման արդյունավետ լուծումները: Օգտագործեք սարքի ողջ ներուժը թողարկելու համար մեծածավալ վճարային քարտեր, որոնք իրենց անհատականացման հնարավորություններով կզարմացնեն հաճախորդներին:

MX Series համակարգը հիանալի լուծում է հարթ քարտերի մեծածավալ թողարկման համար:



Վճարային քարտերի կենտրոնացված թողարկում

Հարթ քարտերի տպագրության տեխնոլոգիաներ (Drop on Demand, մնայուն գրաֆիկա)

Օգտագործեք վճարային քարտերի տպագրման Drop on Demand և մնայուն գրաֆիկայի հնարավորությունները քարտերի տպագրության գերազանցության նոր մակարդակի հասնելու համար: Անխափան կերպով ինտեգրվելով Datacard® MX Series համակարգի հետ, այս հնարավորությունները թույլ են տալիս ցածր ծախսերով իրականացնել արտադրության պարզ գործընթացներ՝ միաժամանակ օգտվելով հարթ քարտերի տպագրության ողջ ներուժից:

Drop on Demand տեխնոլգիայի հնարավորությունները

- Նախապես տպագրված կամ դատարկ սպիտակ քարտերի անզուգական անհատականացում
- Մնայուն տպագրություն, շոշափելի գրավչություն, լաքապատում
- Հուսալիություն, քարտի տվյալների ամբողջականացում
- Ավտոմատացված սպասարկման համակարգ նորագույն թանաքի կիրառմամբ՝ նախատեսված ամենօրյա գործառույթների համար

Նորարարական UV-Curable մնայուն գրաֆիկայով տպագրություն

- Սև, սպիտակ, մետալիկ ոսկեգույն և արծաթագույն անհատականացում՝ բացառիկ թափանցիկությամբ
- Պարզեցված անցում քարտերի ուռուցիկ տպագրությունից դեպի հարթ տպագրություն առանց պաշտպանիչ ծածկույթների անհրաժեշտություն
- Բարձր արդյունավետություն
- Մաքուր համակարգ առանց թանաքի և գոլորշու
- Հուսալի ժապավենային տեխնոլոգիա՝ հիմնված MX Series համակարգերի վրա

Վճարային քարտերի ակնթարթային թողարկում

Ակնթարթային թողարկմամբ ընդլայնեք ձեր հաճախորդների հարմարավետությունը՝ թույլ տալով նրանց կատարել վճարումներ ըստ հարմարավետության՝ ցանկացած վայրում՝ ցանկացած եղանակով:

"Ինֆորմատիկ Սոլուշն" ընկերությունն առաջարկում է ակնթարթային լուծման ամբողջական փաթեթ, որը ներառում է ֆիզիկական քարտերի թողարկման լուծումներ ինչպես ֆինանսական հաստատությունների մասնաճյուղերում, այնպես էլ ինքնասպասարկման կրպակներում: Ստեղծեք քարտերի պորտֆոլիո, որը ոչ միայն կգոհացնի ձեր հաճախորդներին, բայց նաև անխափան կերպով կարտացոլի ձեր հաստատության բրենդի տեսլականը:

Վճարային քարտերի ակնթարթային լուծում

Sigma DS4 համակարգ

Ակնթարթային թողարկման լուծման համար "Ինֆորմատիկ Սոլուշն" ընկերությունն առաջարկում է Sigma DS4 տպիչ սարքը, որն օգտագործվում է ամբողջ աշխարհում գտնվող բանկերի կողմից միանգամայն արագ և անխափան կերպով վճարային քարտեր տրամադրելու համար:

Sigma DS4-ն առաջարկում է՝

- UV մոդուլային տպագրություն, որն ապահովում է քարտի վրա 5 տարվա մնայուն տպագրություն
- Սարքն ունի 6 առանձին քարտի մուտքի դարակներ՝ յուրաքանչյուրի տարողությունը 125 քարտ՝ ընդհանուր միաժամանակ 750 քարտ տեղավորելու հնարավորություն
- Սարքն ունի 3 անվտանգության կողպեքներ նախատեսված UV մոդուլի, քարտային դարակների և հիմնական մասի համար
- Սարքն իրականացնում է վճարային քարտի դիմերեսի, դարձերեսի, հորիզոնական, ուղղահայաց տպագրություն:
- Այն ունի նաև կիոսկում տեղադրելու հնարավորություն՝ 24/7 սպասարկման համար
- Ամբողջական գունավոր կամ մոնոխրոմ տպագրություն քարտի վրա
- Մագնիսական ժապավենների կոդավորում
- Հպումով կամ անհպում չիպային քարտերի անհատականացում

Վճարային քարտերի ակնթարթային թողարկում

Հաճախորդները սիրում են ակնթարթային ամեն ինչ, հատկապես երբ խոսքը վերաբերում է գնումներին:

Անկախ նրանից, թե քարտերն ինչ նպատակով են թողարկվում՝ կորած, գողացված կամ ժամկետանց քարտը փոխարինելու կամ էլ նոր հաշվի բացման նպատակով, քարտերի ակնթարթային թողարկումը արժանանում է հաճախորդի կողմից դրական արձագանքի:

Վճարային քարտերը փոխարենը փոստով ստանալու, հաճախորդն անմիջապես սպասարկվում է բանկի մասնաճյուղում:
Օգտագործելով ճիշտ տեխնոլոգիաներ, բանկերը կարող են թողարկել բարձր որակի քարտեր, որոնք կարող են անհատականացվել տարբեր դիզային էֆֆեկտներով և բավարարել նույնիսկ ամենախստապահանջ հաճախորդին: Որոշ ֆինանսական հաստատություններ օգտագործում են ինքնասպասարկման կրպակներ՝ հաճախորդներին տալով ավելի շատ հնարավորություն վճարային քարտերի թողարկման գործընթացը ինքնուրույն վերահսկելու համար:

36%-ը

հարցվածներից նախընտրում են սպասարկվել բանկի մասնաճյուղերում, ուստի բանկերը պետ ք է հոգ տանեն, որպիսի հաճախորդներին ակնթարթային քարտեր տրամադրվեն հենց բանկի մասնաճյուղում:

Վճարային քարտերի ակնթարթային թողարկում

Հաճախորդի փորձի ամենակարևոր տարրերը

- Բավարարել հաճախորդի սպասելիքները
- Լուծել հաճախորդի խնդիրները
- Ապահովել անխափան սպասարկում
- Մտերիմ հարաբերություններ հաճախորդի հետ
- Ցանկացած ժամին, ցանկացած վայրում
- Ամրապնդել հաճախորդի հավատարմությունը

Ակնթարթային թողարկման արժեքը

- Ակնթարթային լուծմամբ թողարկված քարտերն ունեն 100% ակտիվացման գործակից
- Ակնթարթային լուծմամբ թողարկված քարտերի 47%–ը ակտիվացվում և օգտագործվում են առաջին 8 ժամվա ընթացքում:

Ձեր մրցակցային առավելությունը

Ֆինանսական հաստատությունները վերագնահատում են վճարային քարտերի թողարկման իրեն ռազմավարությունը՝ կիրառելով լուծում, որն իր մեջ ներառում է քարտերի թողարկման կենտրոնական, ակնթարթային և ինքնասպասարկող լուծումներ:

Այսպես հաճախորդներն ունենում են իրենց վճարային քարտը ստանալու եղանակների լայն ընտրություն, ինչն էլ բարձրացնում է հարմարավետությունն ու հաճախորդների գոհունակությունը:

Համաձայն կատարված ուսումնասիրության բանկերն այլևս չեն կարող գործառույթներն իրականացնել անցյալում օգտագործվող տեխնոլոգիաներով:

Ֆինանսական հաստատությունները պետք է կիրառեն այնպիսի բիզնես մոդելներ, որոնք կհամապատասխանեն սպառողների նախասիրությունների հետ:

ABI Հետազոտությունը նաև հաշվարկել է, որ ակնթարթային թողարկված վճարային քարտերի համաշխարհային շուկան կաճի 2022 թվականին 243,2 միլիոնից մինչև 2027 թվականին կանխատեսվող 471,1 միլիոն:

Ապագայի միտումներ

Վճարային քարտերի ապագան հարթ քարտերն են

Ֆինանսական հաստատությունների 91%–ը ուսումնասիրում է հարթ քարտերի տպագրության տեխնոլոգիան և մտածում է ապագայում այն կիրառելու մասին:
Հարցվածներից 56%–ը պլանավորում է կիրառել հարթ քարտերի տպագրության տեխնոլոգիան, իսկ մնացածը ակտիվորեն քննարկում են դրանց օգտագործման հավանականությունը: